

Վ. Հ. ԳՈՐԷԱՆՅԱՆ, Պ. Ա. ՂԱՆԴԻՅԱՆ, Գ. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ,
Ա. Կ. ԹՈՒԶՅԱՆ, Ն. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՑՈՐԵՆԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՈՐՈՇ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դյուղատնտեսական կուլտուրաների, այդ թվում նաև ցորենի սորտերի դերը շափազանց մեծ է: Խոշոր է սելեկցիայի բնագավառում մեր մեծ հայրենիքի նվաճումները՝ նրա գոյության 50 տարիների ընթացքում: Այս նպատակով անհրաժեշտ է հանրագումարի բերել մինչ այժմ ձեռք բերված արդյունքները և լուսաբանել մեր հեռանկարներից մի բանիսը:

Սորտի կյանքի տևողության երկարացումը և բարձր բերքատվության պահպանումը՝ գոյություն ունեցող բոլոր միջոցների կիրառմամբ, ունի խիստ կարևոր նշանակություն: Այդ առավել անհրաժեշտ է, որովհետև սորտը ստացվում է շատ ծախսերի և ջանքերի միջոցով: Բացի այդ, սորտի ստացման համար շատ երկար ժամանակ է պահանջվում: Ըստ Վ. Յա. Յուրևի, ցորենի սորտ ստեղծելու համար հարկավոր է 12—15 տարի, Պ. Մ. Ժուկովսկու կարծիքով՝ մինչև 20 տարի:

Սորտի ստեղծման վրա աշխատում է մասնագետների ու բանվորների մի ստվար խումբ, օգտագործվում են նյութական միջոցներ՝ հող, ջուր, մեքենաներ ու գործիքներ, շենքային հարմարություններ, պարարտանյութեր, հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի համար անհրաժեշտ նյութեր, հետևաբար կատարվում են զգալի ծախսեր: Բայց նոր սորտն իր ներդրման առաջին իսկ տարուց սկսում է վերադարձնել տնտեսության կատարած ծախսը, ըստ բազմապատիկ ավելի՝ նայած ներդրման ծավալին:

Այսպիսով, սորտ ստեղծելը, կապված է խոշոր ծախսերի հետ, իսկ այն ներդնելով, լավ եկամուտ է ստացվում, ուստի, պետք է աշխատել բարձրացնել նրա երկարակեցությունը:

Նշենք, որ Հայաստանի տեղական ցորենները շատ մեծ բազմազանություն ունեն: Ն. Ն. Վավիլովը Հայաստանում գիտահետազոտական շրջագայության ժամանակ համոզվել է, որ մեր հանրապետությունն առաջինն է այն աշխարհադրական վայրերի շարքում, որոնք պետք է ճանաչվեն որպես ցորենների բազմազանության կենտրոն և այդ կուլտուրայի ծագման հայրենիք: Այդ ուղղությամբ ուսումնասիրություններ են կատարել և հարուստ նյութեր կուտակել Ն. Ա. Ստոլետովան, Մ. Գ. Թումանյանը, Գ. Խ. Աղաջանյանը, Բ. Մ. Գարասեֆերյանը, Վ. Հ. Գուլբանյանը, Ա. Ա. Մաթևոսյանը, և ուրիշներ:

Ցորենների այդ մեծ բազմազանությունը ստեղծվել է Հայաստանի աշխարհագրական, էկոլոգիական պայմանների խայտաբղետության հետևանքով: Բույսերի մուտացիոն փոփոխությունները մեր բնակլիմայական պայմաններում հաճախակի են, որոնք, ցավոք, դեռևս լավ չեն ուսումնասիրված: Զգալի դեր են կատարել նաև բնակչության տեղաշարժերը, որոնց ընթացքում ցորեն-

նի կուլտուրան տեղափոխվել է մի տեղից մյուսը և այդ պատճառով բազմա-
պան դարձել ու փոփոխվել:

Ցորենի ֆիլոգենեզի գործում մեծ նշանակություն են ունեցել Հայաստանի
տերիտորիայում մինչև այժմ պահպանված ցորենի վայրի տեսակներն իրենց
ներտեսակային բազմազանությամբ:

Այսպիսով, ՀՍՍՀ-ի տերիտորիայում գոյություն է ունեցել, ապա ստեղծ-
վել ու ձևավորվել է ցորենի հարուստ ֆոնդ, որի մասին գաղափար կարելի է
կազմել աղ. 1-ում բերված տվյալներից:

Աղյուսակ 1

Սովետական Հայաստանի տերիտորիայում հայտնաբերված ցորենի տեսակներ և այլատե-
սակներ

Տեսակ	Այլատեսակ- ների թիվը	Տեսակ	Այլատեսակ- ների թիվը
Վայրի ցորեն, միաբիստ, միա- հատիկ	51	Ցորեն արևելյան	3
Վայրի ցորեն, երկբիստ, միահա- տիկ	37	Ցորեն տուրգիզում (անգլիական)	11
Ցորեն ուրարտու, վայրի	5	Ցորեն պարսկական	7
Ցորեն արարատյան, վայրի	10	Ցորեն վանի, ճյուղավոր	3
Միահատիկ ցորեն	4	Ցորեն սպելտա (կիսահաճար)	5
Հաճար	7	Ցորեն փափուկ	80
Ցորեն կարծր	39	Ցորեն կունդիկ	40

Աղյուսակում բերված տվյալների համաձայն, մեզ մոտ կան շուրջ 300
բուսաբանական այլատեսակներ, որոնցից յուրաքանչյուրի սահմաններում գո-
յություն ունեն ձևեր, ռասաներ, բիոտիպեր և այլն: Այդ բազմազանությունից
էլ ստեղծվել են Հայաստանի տեղական ցորենները, որոնց կազմը տարերայ-
նորեն խառնուրդային է ստացվել: Այս խառնուրդների մեջ ցորենի որոշ այլա-
տեսակներ ավելի լավ են հարմարվել արտաքին պայմաններին և գերակշռող
դարձել: Հնամենի սորտ-պոպուլյացիաները մշտապես փոփոխությունների են
ենթարկվել, նրանց միջից վերացել են զանազան տեսակներ ու այլատեսակներ
և առաջացել նորերը, որոնք և հասել են մինչև մեր օրերը: Այդպիսի տեղական
սորտ-պոպուլյացիաներից կարևորներն են. Սլֆահատ, Ալթիաղաջ, Զարդա,
Իրանի կարմիր ցորեն, Գյուլգյանի, Սպիտակահատ, Կարմրահատ, Գալգալոս
(Քռիկ), Տուկլուղ, բազմաթիվ կունդիկ ցորեններ, Կովկասյան լեռնային ցորեն,
Դեղնազարդա (կարծր ցորեն), որը մինչև 30-ական թվականները մշակվում էր
Հայաստանի հյուսիսային շրջաններում և ուներ մեծ բազմազանություն:

Ուշագրավ է, որ Հայաստանում աճում են. նաև վայրի ցորեններ՝ տեսա-
կային ու այլատեսակային մեծ բազմազանությամբ (4 տեսակ և շուրջ 100
այլատեսակ):

Մինչ սովետական կարգերը Հայաստանի ցորենները գրեթե չեն ուսում-
նասիրվել, իսկ վայրի ցորենները նույնիսկ հայտնաբերված չեն եղել: Հայաս-
տանի կենդանական ու բուսական հարստությունների հիմնավոր ուսումնասի-
րությունները սկսվել են սովետական կարգերի հաղթանակից անմիջապես
հետո՝ 1925—1926 թվականներից:

Մինչև այդ հետազոտական աշխատանքների սկիզբը Հայաստանում կազ-
մակերպված սելեկցիա գոյություն չի ունեցել, մինչդեռ այն որպես կիրառա-

կան գիտություն վաղուց ի վեր հայտնի էր Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս: Սելեկցիան որպես ժամանակակից գիտության ճյուղ չէր ճանաչված: Այդպիսի ճանաչման համար պայմաններ ստեղծվեցին ժամանակակից գենետիկայի զարգացման հիման վրա: Սելեկցիայի առաջին արդյունքը Հայաստանում եղել է այն, որ խառնուրդային ցորեններից մասսայական ընտրության միջոցով առանձնացվել են նրանց հիմնական այլատեսակները և ներդրվել արտադրության մեջ՝ որպես պոպուլյացիոն սորտեր:

Պարզվեց, որ խառնուրդային ցորենների բերքատվությունը թեև կենսաբանական պատճառներով որոշ չափով կայուն է, սակայն, մաքուր սորտերի համեմատությամբ ցածր է:

Առաջին սելեկցիոն մաքուր սորտերը Հայաստան բերվեցին դրսից: Դրանք մի քանի հատ էին և 1930-ական թվականներին փորձարկվեցին մեր հանրապետություններում նոր կազմակերպված և ծավալվող պետական սորտափորձարկման սիստեմում: Այդ սորտերից ամենահաջողակը հռչակավոր Ուկրաինական էր, որն ստացվել է անհատական ընտրության միջոցով Միրոնովյան սելեկցիոն կայանում: Այդ սորտը շատ դրական դեր խաղաց մեզ մոտ: Նրա շնորհիվ մեր լեռնային շրջանները, որոնք միայն գարնանացան ցորեններ էին ցանում, իսկ աշնանը միայն աշորա, ունեցան նաև աշնանացան ցորեն: Ուկրաինկայի ցանքատարածությունը հասավ մոտ 30—35 հազար հեկտարի:


Այդ կապակցությամբ առաջացավ սկզբունքային նշանակություն ունեցող մի հարց. տեղի կարիքները պետք է տեղում ստացված սորտերով բավարարվեն, թե՞ բերովի: Մի բան պարզ է ու որոշակի, որ այս կարիքները պետք է բավարարվեն լավագույն սորտերով, որոնք կարող են լինել և տեղում ստացված, և բերովի: Այդ հիման վրա էլ հարցը լուծվեց ի օգուտ այն բանի, որ տեղում կազմակերպվի սելեկցիոն աշխատանք և դրա հետ միասին սորտեր ներմուծվեն նաև դրսից:

Եվ ահա, սկսած 1930 թվականներից մեր հանրապետությունում սելեկցիոն աշխատանքներ են իրականացվում: Առաջին ուսումնասիրությունները կատարվել են լենինականի սելեկցիոն կայանում, այնուհետև Նրեանի գյուղատնտեսական ինստիտուտում և Միոթենական գիտությունների ակադեմիայի Հայաստանի ֆիլիալի կենսաբանության ինստիտուտի գենետիկայի սեկտորում: Այդ ժամանակամիջոցում մի շարք սորտեր են բերվել դրսից, ինչպես նաև նոր սորտեր են ստացվել տեղում: Այժմ տեսնենք, թե ինչպես են ծառայում այդ սորտերը մեր գյուղատնտեսությանը, որքան է նրանց երկարակյացությունը (աղ. 2):

Աղ. 2-ից երևում է, որ Հայաստանը ունեցել է և այժմ էլ ունի ցորենի սորտերի մեծ բազմազանություն: Սելեկցիայի տարբեր եղանակներով ստացված սորտերի թիվը հասնում է 27-ի, որոնցից մասսայական ընտրությամբ ստացվածները 12 են, այլ եղանակների կիրառմամբ՝ 15: Նշված սորտերից տեղում ստացվածներ են 22-ը, դրսից բերվածները՝ 5:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ ցորենի սելեկցիայում սկզբում դերակշռել է մասսայական, ապա անհատական ընտրությունը, դրանից հետո՝ տարբեր ցորենների խաչաձևումը, ըստ որում վերջինս տարբեր եղանակներով:

Դրսից բերված 5 սորտից 2-ը (Ուկրաինկա և Կրասնոդարկա) մշակությունից հանվել են՝ բերքատվությունը պակասեցնելու պատճառով, դեռևս որոշ տեղ է գրավում նովոուկրաինկա 83-ը, որը արագորեն փչում է իր տեղը:



Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ 2

Տվյալներ Հայաստանում մշակված և այժմ մշակվող պտղուլյացիոն և սեւեկցիոն մաքուր սորտերի մասին

Ա ն ու ն ը	Ներդրված տարին	Բերվող տեսակը	Ստացման եղանակը	Սորտի այժմյան վիճակը
Կարմիր սլֆահատ	1928 — 1930	տեղական	մասսայական ընտրություն	մշակվում է
Գյուլգանի	»	»	»	մշակվում է փոքր չափով
Ալթիադաջ	»	»	»	մշակվում է
Զարգա	»	»	»	մշակվում է փոքր չափով
Սպիտակահատ	»	»	»	մշակվում է
Դեղնազարդա	»	»	»	վերացել է
Էրինացեում (կարմիր կունդիկ)	»	»	»	մշակվում է
Պերսիկում	»	»	»	մնացորդային հետքեր
Կարմրահատ	»	»	խայտաբղետ պտղուլյացիա մասսայական ընտրություն	»
Իռերրիցեպս (սպիտակ կունդիկ)	»	»	»	»
Գալգալոս (Բոիկ)	»	»	»	մշակվում է
Հաճար	»	»	»	»
Ուկրաինկա	1930	բերովի	անհատական ընտրություն	մնացորդային հետքեր
Կրասնոգարկա	1941	»	»	վերացել է
Լենինականի 3	1947	տեղական	»	»
Արմյանկա	1949	տեղական	անհատական ընտրություն	մնացորդային հետքեր
Արտաշատի 42	»	»	»	փոքր տեղ է գրավում
Նղվարդի 4	1953	»	հիբրիդ	»
Լեռնային 22	1954	»	անհատական ընտրություն	»
Լենինականի 216	1956	»	»	վերացել է
Նորկոնգիկ	1957	»	»	փոքր տեղ է գրավում
Ալմարգարիտ	1960	»	հիբրիդ	»
Նովոուկրաինկա 83	1961	բերովի	»	»
Վարդենիկ 9	1961	տեղական	հիբրիդ	շրջանացված է
Էրիտրուեուկոն 12	1963	»	»	փոքր տեղ է գրավում
Բեզոստայա 1	1963	բերովի	»	շրջանացված է
Միրոնովսկայա 808	1965	»	վերափոխում	»

Բեզոստայա 1 և Միրոնովյան 808 սորտերը համեմատաբար նոր շրջանացված և այժմ տարեցտարի ընդարձակվող տարածությունների վրա մշակվող ցորեններ են, որոնք իրենց կենսաբանական պահանջների տեղադրման դեպքում բարձր բերք են ապահովում:

Այսպիսով ակնհայտ է, որ դրսից սորտեր բերելը ըստ էության ռեսուրսագիտական և ռեսուրսաօգտագործման աշխատանք է, մեզ մոտ այն պետք է խորացվի:

Ինչպես ասվեց, մեր տեղական ցորենների բերքատվությունը առանձնապես բարձր չէ: Նույնը վերաբերվում է նաև նրանց հիբրիդացման հիման վրա ստացած սորտերին: Այսպես, Արտաշատի 42 սորտի առավել բերքը 1 հեկտարից հասել 47 ցենտների, Նղվարդի 4-ինը՝ 49-ի, Էրիտրուեուկոն 12-ինը՝ 54-ի, իսկ Բեզոստայա 1-ի բերքատվությունը 1 հեկտարից հասնում է 60 ցենտների, այն էլ շատ ավելի ընդարձակ տարածություններից, Միրոնովյան 808-ը Լեռնային շրջաններում երբեմն ապահովում է Բեզոստայա 1-ի համեմատությամբ:

ավելի բարձր բերք: Հանրապետությունում այժմ լայն արտադրական փորձարկման են ենթարկվում Ավրորա և Կավկազ սորտերը, որոնք նախնական տվյալներով գերազանցում են Բեզոստայա 1 և Միրոնովյան 808 սորտերին:

Հայաստանում ցորենի սելեկցիայի գծով աշխատողներն ներկայումս օգտագործում են վերևում նշված լավագույն սորտերը, որոնց խաչաձևում են տեղական ցորենների հետ, նպատակ ունենալով ստանալ ավելի արժեքավոր նոր սորտեր: Այժմ խնդիրն այն է, որ խաչաձևման միջոցով սինթեզվեն նոր արժեքավոր սորտեր, օժտված բարձր բերքատվությամբ և իրենց մեջ ունենան տեղական ցորենների մի շարք կարևոր հատկանիշներ:

Արժարժեքով ցորենի սելեկցիայի հարցերը, պետք է ուշադրություն դարձնել այն սկզբունքային տեղաշարժերին, որոնք տեղի ունեցան այդ բնագավառում: Խոսքը վերաբերվում է այսպես կոչված «կանաչ հեղափոխությանը», որի էության հիմքն են կազմում խիստ բարձր բերքատվություն ունեցող սորտերը: Վերջիններիս շնորհիվ սկսվեցին բարձր բերքեր ստացվել Ճապոնյայում, Մեքսիկայում, Հնդկաստանում, նաև լայն չափերով Սովետական Միությունում և այլուր:


«Կանաչ հեղափոխությունը» իրականացավ գենետիկական հետադոտությունների շնորհիվ: Պարզվեց, որ բնության մեջ գոյություն ունեն ցորեններ, որոնք օժտված են ցածրացողունության գեներով: Այդ ցորենները հիբրիդացման ենթարկվեցին այլ ցորենների հետ և ստեղծվեցին ցածրացողուն, էրեկսոիդ ձևեր: Այդ ցածրացողուն ցորեններն պառկելու հանդեպ բարձր դիմացկանություն հանդես բերին և հնարավորություն ընձեռեցին սելեկցիայի միջոցով բաղմամբիվ արժեքավոր նոր սորտեր ստանալու:

Այդ ճանապարհով ստացված սորտերը բարձր բերքատու են, առանց որի «կանաչ հեղափոխություն» չէր կարող տեղի ունենալ: Այդպիսի բերքատվությունը պայմանավորվում է նրանով, որ այս սորտերի ցանքերը չեն պառկում շնորհիվ այն բանի, որ նրանց ցողունները համեմատաբար ցածր են, ունեն անատոմիական-ձևաբանական ամուր կառուցվածք. պրոդուկտիվ հասկեր, լեցուն ու ծանրակշիռ հատիկներ, վերջիններիս բարձր սպիտակուցայնությամբ: Այդ ցորենների համեմատաբար ցածր թիակալությամբ պայմանավորված է հիմնականում մեկ հասկակիր (գլխավոր) ցողունի առաջացումը, որի ամենալավ պատկերը ցանքերի ըստ բարձրության հիանալի հավասարվածությունն է:

Էրեկսոիդ ցորենների այս հատկությունը հնարավորություն է ընձեռում խիստ բարձրացնելու ցանքի նորման, հասցնելու 7 միլիոն հատիկի՝ մեկ հեկտարից, կամ 300—320 կգ: Այսպիսի խտության դեպքում ցանքը չի պառկում նույնիսկ առատ ոռոգման պայմաններում: Քանի որ այս տիպի ցորեններն ունեն նաև վերևում հիշատակված դրական հատկությունները, ապա նրանցից ստացվում է բարձր բերք, ըստ առանձին փաստերի մինչև 100 ցենտներ մեկ հեկտարից:

Պարզվեց, որ մշակության բարձր ագրոտեխնիկայի պայմաններում տեղական և ոչ մի սորտ չի տալիս այնքան բարձր բերք, որ ստացվում է մի շարք նոր սորտերից (Բեզոստայա 1, Ավրորա, Կավկազ, Միրոնովյան 808 և այլն): Շեշտում ենք՝ բարձր ագրոտեխնիկայի պայմաններում, իսկ ցածր ագրոտեխնիկայի դեպքում դրությունը փոխվում է՝ ի վնաս բարձր բերքատուների:

Պարզվեց նաև ոչ պակաս կարևոր մի այլ հանգամանք: Դա նոր սորտերի



էլաստիկականությունն է՝ հողակլիմայական-աշխարհագրական, էկոլոգիական տարբեր պայմաններում մշակվելու ունակությունը: Դա լուրջ առավելություն է մեր տեղական ցորենների ու սորտերի համեմատությամբ, որոնց մշակութային շրջանակը անհամեմատ նեղ է:

Այսպիսով, հարց առաջացավ, արդյոք հանդուրժելի՞ է մշակել ցածր բերատու ցորեններ բարձր բերքատուների կողքին, եթե մինչև անգամ առաջինների որակը համեմատաբար բարձր է: Պարզ է, որ հանդուրժելի չէ, ոչ մի տնտեսություն չի կարող այդպես վարվել: Ուստի, խնդիր դրվեց՝ կամ հրաժարվել տեղական ցորեններից, կամ համապատասխան սելեկցիայի միջոցով օգտագործել նրանց լավ հատկանիշները, վերակառուցման ենթարկել տեղական սորտաֆոնդը, ստեղծել նոր սորտեր՝ որոնք ունենան ցածր, էրեկտոիդ ցողուններ, հասկերի բարձր պտղաբերություն, հատիկների բարձր բացարձակ կշիռ, լավ որակ, սպիտակուցի բարձր պարունակություն, տեխնոլոգիական (ալրաղացման, հացաթխման) առաջնակարգ հատկություններ:

Հայաստանի սելեկցիոներները կատարել են այդպիսի աշխատանք և ստեղծել են վերևում նկարագրված ցորենների մի ամբողջ համակարգ, որոնք այժմ փորձարկվում են տարեցտարի լայնացող չափերով: Արդեն կան փաստեր, որ մի շարք գծեր իրենց որակով, որոշ դեպքերում նաև բերքատվությամբ, գերազանցում են «կանաչ հեղափոխություն» պայմանավորող սորտերին:

Այն հանգամանքը, որ Հայաստանի սելեկցիան իվիճակի եղավ այսպիսի վերակառուցում իրականացնելու, ցույց է տալիս նրա հասունության ակներև փաստը ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի այս օրերում: Սա համարում ենք մեր հիշարժան նվաճումներից մեկը, միաժամանակ գտնելով, որ մեր անելիքները դեռևս շատ մեծ են:

Իսկ ինչպես վարվել տեղական ցորենների հարուստ, բազմազան ֆոնդի հետ: Ասվեց, որ նրանց մեջ կան արժեքավորները, առաջին հերթին ըստ որակի: Այն վերակառուցումը, որին այժմ ենթարկվում է ցորենների տեղական սորտաֆոնդը, պետք է մտածված կերպով օգտագործի տեղական ելանյութի գենոֆոնդը: Այստեղից բխում է, որ տեղում պետք է կազմակերպվեն գենոֆոնդային հավաքածուներ և մշակվեն համապատասխան ագրոտեխնիկական պայմաններում: Այս պրոբլեմը ծառացել է նաև մյուս հանրապետությունների առջև, որոնք հարուստ են տեղական ցորենների բազմազանությամբ. օրինակ, Վրաստանը և Ադրբեջանը:

Այսպիսով, ցորենի սելեկցիան մեր երկրում այժմ բեկումային շրջան է ապրում:

Մշակվող սորտերը պետք է ունենան ոչ միայն բարձր բերքատվություն և որակ, այլև երկարակյացություն: Սակայն, ինչպես վերը նշվեց, ցորենի սորտերը մեզ մոտ երկարակյաց չեն: Այս հարցը չափազանց կարևոր է և այն լուրջ մտահոգության առարկա պետք է հանդիսանա:

Հասկանալի է, որ սորտի երկարակյացությունը պայմանավորված է նրա ժառանգականությամբ, կենսաբանական առանձնահատկություններով: Սելեկցիոները սորտը հանձնում է պետական սորտափորձարկման, այնուհետև մրցույթում արտադրություն և դրանից հետո այլևս չի մտածում նրա մասին: Այդ հիշտ չէ, սորտը պետք է պահվի իր ստեղծողի տեսադաշտում և մինչև անգամ վերանորոգվի, եթե այդ պահանջվում է ու հնարավոր է:

Սորտի ժառանգական առանձնահատկությունները կարող են երևան գալ համապատասխան արտաքին պայմաններում: Այստեղից բխում է, որ սորտի մշակության պայմանները պետք է նպաստեն նրա երկարակյացությանը և ժառանգական հատկությունների պահպանմանը: Այս առումով շափաղանց մեծ է սերմնաբուծության դերը: Սովորաբար ասվում է, որ սերմնաբուծությունը պետք է պահպանի սորտի ժառանգական հատկությունները, ոչ միայն պահպանի, այլև բարելավի: Ցորենի տվյալ սորտի ժառանգական պահանջների բավարարման, ժառանգական հատկությունների դրսևորման համար պահանջվում են ագրոտեխնիկական լավագույն պայմաններ: Ցորենի լավագույն սերմնացուն ստացվում է տվյալ սորտի առավել բարձր բերք տվող ցանքից: Ագրոտեխնիկական այնպիսին պետք է լինի, որպեսզի ցորենի ցանքում ամեն մի բույս իր աճման ու հասունացման ընթացքում բավարարվի սննդանյութերով և «ստիպված» չլինի կրճատել իր աճը, հարկադրված չլինի «հրաժարվել» մեկ կամ մի քանի հասկիկի ձևավորումից՝ հասկի հիմքին մոտ, մեկ կամ մի քանի հատիկի ձևավորումից՝ հասկի բոլոր հասկիկներում: Սրա հետևանքով պակասում է բերքը, պակասում են նաև հատիկների բերքատուական, այսինքն, սերմնաբուծական հատկությունները:

Չափազանց մեծ է նաև ժամանակակից ագրոքիմիայի դերը, որը պետք է ապահովի բույսերը մակրո և միկրո պարարտանյութերով, նրանց լավագույն զուգակցություններով, տեղի կոնկրետ պայմանների հաշվառմամբ:

Մեծ է նաև քիմիայի դերը, այն քիմիայի, որը որոշ քիմիական նյութերով ազդելով բույսերի վրա, կարողանում է կանոնավորել նրանց աճն ու զարգացումը, բերքի քանակն ու որակը:

Այս ամենը շատ անհրաժեշտ է ցորենի սորտերի երկարակյացության բարձրացման համար:

Մեր հանրապետությունում, որտեղ հանրագումարի են բերվում ձեռք բերված նվաճումները՝ ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի կապակցությամբ, կարող է նշվել նաև ցորենի սելեկցիայի բնագավառը: Գիտության այդ բնագավառը ծառայություն է մատուցել մեր հանրապետությանը սկսած սովետական կարգերի հաղթանակի առաջին տարիներից: Այն այսօր արդեն որոշակի նվաճումներ ունի և ավելին ձեռք կբերի առաջիկա տարիների ընթացքում:

ՀՍՀՄ գյուղմինիստրության երկրագործության
ինստիտուտ

Ստացված է 24. X. 1972 թ.

В. О. ГУЛКАНЯН, П. А. ГАНДИЛЯН, Г. Г. ХАЧАТРЯН, А. К. ТОРЧЯН,
Н. А. АВЕТИСЯН

О НЕКОТОРЫХ РЕЗУЛЬТАТАХ СЕЛЕКЦИИ ПШЕНИЦЫ

Р е з ю м е

В области возделывания пшеницы можно добиться результатов, дающих основание рассматривать их как зеленую революцию. Суть ее, как известно, заключается в создании пшениц с резко повышенной урожайностью, дсходящей в настоящее время часто до 100 ц с га, если применяется высокая агротехника.

Сорта, выведенные на основе богатейшего разнообразия местного генофонда пшениц даже в таких республиках, как Грузинская, Азербайджанская и Армянская, не доходят по урожайности до сортов, входящих в фонд сортов зеленой революции. Например, в Армянской ССР самый высокий урожай сорта, выведенного при селекции местных пшениц, составил 54 ц с гектара.

Основой высокой урожайности пшениц зеленой революции, как было установлено, является низкостебельность, эректоидность и неполегаетость растений, продуктивность колосьев, полновесность зерен, высокая белковость последних и, кроме того, их часто наблюдаемая экологическая эластичность.

Первые из упомянутых выше свойств сортов зеленой революции обусловили загущенность посевов — 7 000 000 зерен на гектар, или 300—320 кг—при которой пшеница не полегает даже на фоне высокой агрохимии—обильного удобрения и полива. Местные сорта в таких условиях полегают.

Таким образом, местные селекционные сорта не могут конкурировать с сортами зеленой революции, ни одно хозяйство не согласится возделывать не менее урожайную пшеницу взамен более урожайной. Правда, можно было бы выдвинуть возражения в пользу местных сортов пшениц—у них выше качество зерна и, кроме того, больше количество соломы, нужной как грубый корм в животноводстве. Однако эти возражения мало обоснованы, так как современная мукомольно-хлебопекарная технология выправляет многие дефекты пшениц, а солома может быть заменена более ценными продуктами.

Следовательно, остается в силе возникшая на наших глазах проблема использования старого генофонда пшеницы. Нет сомнения, что это и является переломным этапом в использовании стародавних пшениц.

Нам представляется, что необходимо сохранить и беречь старый фонд пшениц с целью использования его отдельных ценных свойств при гибридизации, прежде всего качественных.

В Армянской ССР уже создан целый ряд пшениц, у которых подчеркнутая низкостебельность, неполегаетость, высокое качество зерна, высокая урожайность. Исследования в этом направлении будут расширяться.